

**Երկրաբանություն
մասնագիտության հարցաշար**

1. Երկրաբանական գիտության առարկան և կապը այլ գիտությունների հետ:
2. Երկրի ձևը, կառուցվածքը, զարգացման պատմությունը:
3. Հասկացություններ ապարների և միներալների մասին:
4. Նստվածքային ապարներ, առաջացման պայմանները, տիպերը:
5. Մագմատիկ գոյացումներ, առաջացման պայմանները:
6. Ինտրուզիվ ապարների դասակարգումը:
7. Հրաբուխներ: Հրաբխային արտավիժման արգասիքները:
8. Հրաբուխների հիմնական տիպերը:
9. Հրաբխային ժայթքումների տիպերը:
10. Հրաբխային ապարների դասակարգումը:
11. Հողմնահարում: Ֆիզիկական և քիմիական հողմնահարում:
12. Ապարների հարաբերական (հնէաբանական) և բացարձակ հասակի որոշման մեթոդները:
13. Հիդրոերկրաբանությունը և նրա ուսումնասիրության ոլորտները:
14. Ստորերկրյա ջրերի հիմնական տիպերը:
15. Ճարտարագիտական երկրաբանությունը որպես տեսական և կիրառական գիտություն:
16. Հայաստանի տարածքի սողանքային երևույթները, սողանքների տիպերը և նրանց դասակարգումը:
17. Հայաստանի տարածքի ինտրուզիվ ապարների տիպերը, տեղաբաշխումը:
18. Հայաստանի տարածքի տարբեր երկրադինամիկ պայմաններին բնորոշ հրաբխայնության առանձնահատկությունները:
19. Մետամորֆիզմ, մետամորֆային ապարներ:
20. Հայաստանի տարածքի մագմատիզմի դերը էնդոգեն հիդրոթերմալ հանքագոյացման պրոցեսներում:
21. Նստվածքային և հրաբխածին-նստվածքային ապարների տիպերը:
22. Ֆլիշային և օրոգեն փուլերի ֆորմացիաներ:
23. Հայաստանի տարածքի երկրաբանական զարգացման հիմնական փուլերը (բայկալյան, կալեդոնյան, հերցինյան, կիմերյան, ալպյան):
24. Հայաստանի տարածքի տեկտոնական շրջանցումը, կառուցվածքաֆորմացիոն գոտիները և դրանց բնութագիրը:
25. Հայաստանի տարածքի երկրաբանական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունները:
26. Օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման տիպերը (հիդրոթերմալ, մագմատիկ, նստվածքային, հրաբխածին):
27. Երկրաժամանակագրություն Գնահատման մեթոդները: Շերտագրական ժամանակագրություն:
28. Երկրաքիմիա: Առարկան և խնդիրները:
29. Երկրի երկրաֆիզիկական դաշտերը մագնիսական, գրավիտացիոն, ջերմային:
30. Երկրի էներգիայի արտաքին և ներքին աղբյուրները:
31. Երկրի ներքին կառուցվածքը և նրա ուսումնասիրման մեթոդները:

32. Երկրակեղև, լիթոսֆերա և աստենոսֆերա: Երկրի մանթիա, արտաքին և ներքին միջուկներ:
33. Ճարտարագիտա-երկրաբանական կտրվածքների ուսումնասիրումը քաղացիական և արդյունաբերական շինարարության նպատակով:
34. Գրունտների դասակարգումը:
35. Տեկտոնական շարժումները իզոստատիկ անոմալիաները:
36. Երկրակեղևի և մայրցամաքների ժամանակակից ստրուկտուրային տարրերը և նրանց զարգացման դինամիկան:
37. Ծալքավորումը, նրա տիպերը: Ծալքավորման առաջացման պայմանները և մեխանիզմը:
38. Խզումնային խախտումներ: Խորքային բեկվածքների ու համակեղևային խզումնային խախտումների տիպերը և նրանց հայտնաբերման մեթոդները:
39. Երկրաֆիզիկական հետազոտությունների մեթոդները:
40. ՀՀ տարածքի տեկտոնական կառուցվածքի հիմնական հատկանիշները:
41. Նեոտեկտոնիկա և ժամանակակից տեկտոնական շարժումներ:
42. Մեյամոտեկտոնիկա: Ակնթարթային տեղաշարժերը, որպես ժամանակակից շարժումների դրսևորման ձև:
43. Երկրաշարժեր. երկրաշարժերի առաջացման պատճառը:
44. Երկրաշարժերի օջախները և դրանց պարամետրերը:
45. Երկրաշարժի ինտենսիվությունը (ուժը): Հասկացություն մագնիտուդի, էներգիայի մասին:
46. Մեյամիկ սանդղակ, սանդղակների տարատեսակները: Հասկացություններ սեյսմիկ շրջանցման մասին: ՀՀ սեյսմիկ շրջանցման քարտեզը:
47. Երկրաշարժերի կանխագուշակման խնդիրները: Պաշտպանություն երկրաշարժերից: Հակասեյսմիկ շինարարություն:
48. Ինտրուզիվ և էֆուզիվ լեռնային ապարների տեղադրման ձևերը:
49. Մագմատիզմի դերը երկրակեղևի ծագման և զարգացման գործում:
50. Հրաբխածին գոտիներ: Հրաբխականությունը ժամանակի մեջ:
51. Հետմագմատիկ պրոցեսները և նրանց դերը օգտակար հանածոների առաջացման գործում:
52. ՀՀ տարածքի հրաբխականությունը, նրա դրսևորման հիմնական տիպերը:
53. ՀՀ տարածքի հրաբխածին օգտակար հանածոների տիպերը, տարածումը և շահագործումը:
54. Մետամորֆիզմի գործոնները և տիպերը:
55. Քամու քայքայիչ գործունեությունը, փոշենման նյութի տեղափոխումը և կուտակումը:
56. Գետային էրոզիա, քարքարուտների տեղափոխումը գետերի մեջ:
57. Սողանքային պրոցեսներ: Սողանքների տիպերը:
58. Էկզոգեն պրոցեսների տիպերը և նրանց դասակարգումը:
59. Էկզոգեն պրոցեսների ազդեցությունը Երկրի ռեյեֆագոյացման վրա:
60. Բնապահպանություն: Արդի հիմնախնդիրները: Մարդու ազդեցությունը բնության վրա: Օդի, ջրի աղտոտվածության խնդիրը:
61. Հայաստանում առկա բնապահպանական խնդիրները:
62. Ընդերքի պահպանման խնդիրը: Հայաստանում առկա հիմնահարցերը:
63. Մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոներ:

64. Հայաստանի մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոները, նրանց տեղաբաշխումը, արդյունաբերական նշանակությունը:
65. Հայաստանի հանքային ջրերը, նրանց տեղաբաշխումը, տեսակները, տնտեսական նշանակությունը:
66. Մազմատիկ դիֆերենցում, լիկվացիա: Մազմատիկ միներալների անջատման հաջորդականությունը ըստ Ն. Բոուենի:
67. Թթու, միջին, հիմքային և գերհիմքային կազմի ապարների պետրոգրաֆիական կազմը և առանձնահատկությունները:
68. Հասկացություն երկրաջերմային էներգիայի մասին, նրա աղբյուրները:
69. Մալերի տեկտոնիկական և օֆիոլիտները:
70. Սառցադաշտերի դերը ռելյեֆի ձևավորման գործում:
71. Կարստեր, դրանց առաջացումը:
72. Օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությունների մեթոդները:
73. Երկրաբանության կապը Երկրի մասին հարակից գիտությունների հետ:
74. Օգտակար հանածո, օգտակար հանածոի հանքավայր, հանքանյութ հասկացություններ:
75. Հանքառաջացման երկրաբանական պայմանները և օգտակար հանածոների հանքավայրերի դասակարգման սկզբունքները:
76. Բուն մազմատիկ, սկառնային, կոնտակտային-մետասոմատիկ հանքավայրեր, երկրաբանական ու ֆիզիկաքիմիական պայմանները և կապը մազմատիկ ֆորմացիաների հետ:
77. Հետմազմատիկ՝ ջրաջերմային (հիդրոթերմալ) հանքավայրեր, ձևավորման երկրաբանական պայմանները:
78. Հրաբխածին, էքսհալացիոն-նստվածքային հանքավայրեր, հրաքարային հանքավայրեր, ձևավորման երկրաբանա-երկրադինամիկական և ֆիզիկաքիմիական առանձնահատկությունները:
79. Արտածին, նստվածքային և մետամորֆային հանքավայրեր, ձևավորման առանձնահատկությունները:
80. Մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի արդյունաբերական ծագումնաբանական տիպերը և հանքանյութերի կարևորագույն ֆորմացիաները:
81. Ոչ մետաղային և այրվող օգտակար հանածոների հանքավայրեր, արդյունաբերական ծագումնաբանական տիպերը:
82. Հասկացություններ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների հաշվարկման, գնահատման, դասակարգման և շահագործման մասին:
83. Օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման երկրաբանա-երկրադինամիկ օրինաչափությունները ժամանակի և տարածության մեջ (երկրակեղևում, քարոլորտում, թիկնոցում):
84. Հայաստանի Հանրապետության մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոները, արդյունաբերական ծագումնաբանական տիպերը և հանքանյութերի կարևորագույն ֆորմացիաները:
85. Հայաստանի ընդերքի հանքահումքային ռեսուրսների օգտագործման և պահպանության ժամանակակից հիմնախնդիրները:

Գրականության ցանկ

1. Асланян А.Т. История тектонического развития Тавро-Кавказской области. Изд. АН Арм. ССР, Ереван, 1984, 161с.
2. Габриелян Л.П., Саркисян О.А., Симонян Г.П. Сейсмотектоника Армянской ССР, Изд. ЕГУ, 1981, 234с.
3. Зоненшайн Л.П., Савостин Л.А. Введение в геодинамику. М. Недра, 1979. 312с.
4. Милановский Е.Е. Рифтогенез в истории Земли (в двух книгах). М.: Недра, 1983, 1987.
5. Унсков В.А. Тектоника плит. Л.: Недра, 1981. 288с.
6. Хаин В.Е., Ломидзе М.Г. Геотектоника с основами геодинамики. Изд. Миск. Ун-та. 1995. 480с.
7. Хаин В.Е., Михаелов М.Г. Общая геотектоника, М. Недра, 1985. 326с.
8. Хаин В.Е., Ломозе М.Г. Геотектоника с основами геодинамики. М., Изд. МГУ, 1995.
9. Մարգարյան Հ.Հ. Հայկական ՄՍՀ ռեգիոնալ երկրաօտեկտոնիկա: ԵՊՀ, 1989. 234 էջ.
10. Ավետիսյան Վ.Ս. Հիդրոերկրաքիմիական հանույթի տվյալների մեկնարանության մեթոդիկան նավթազազարերության կանխատեսման նպատակով: Երևան, ԵՊՀ, 2005:
11. Голева Г.А. Гидрогеохимия рудных элементов. М., Недра, 1977, 216с.
12. Григорян С.В. Первичные геохимические ореолы при поисках и разведке рудных месторождений. М., Недра, 1987, 408с.
13. Григорян С.В. Рудничная геохимия. М., Недра, 1992, 296с.
14. Инструкция по геохимическим методам поисков рудных месторождений. Сост. Григорян С.В., Соловов А.П., Кузин М.Ф. Под ред. Л.Н.Овчинникова. М., Недра, 1983, 191 с.
15. Крайнов С.Р., Швец В.М. Гидрогеохимия. Москва, "Недра", 1992. 463 с.